ձապետի ժամանակագրությունում» ասված է. «Ասպետները, որոնք ժառանգությունից զրկված էին, կամ որոնց երկրները Սարակինոսք գրաված էին և տիկինները, որոնց ամուսինները վախճանված էին և որք օրիորդներ, գնացին հոն Կիպրոս և Կիևի թագավորը տվավ անոնց առատ երկրներ և չկար մեկն, որ հոն երթար և որուն նա առատ երկրներ չտար»[48]:

Հետևաբար, Կիլիկիայում ևս 12—14-րդ դարերում արտաքին թշնամիների դեմ մղված երկարատև պատերազմից հետո շատ բնական էր, որ առաջանար ազնվականների մի դասակարգ, որի հիմնական զբաղմունքը լիներ ֆեոդալի մոտ զինվորական ծառայություն կատարելը, հույս ունենալով վարձատրվել ռազմական ավարով կամ գերիների փրկագնից ստացած եկամուտներով: Սմբատ սպարապետը արձանագրելով այդ փաստը գրում է. «Բայց և զյիշվելոյն և զշահերոյն բաժնելն պատեհէ՝ որ գրենք... Եվ ինչ շահ կենա՝ ըղորթն այն է՝ որ զամենն յիրար քշտեն, ու կէսն թաքվորինն է և կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթրվին չափոյն ի յիրենց վերայ բաժնեն: Ապա... բրդեղենն ու բամբակեղենն և պղինձն ու երկաթն զաւրացն է»[49]:

Փրկագնից ստացված եկամուտները զինվորականների միջև բաժանելու մասին է խոսում հետևյալ վկայությունը. «Յարձակեալ, ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն հունաց՝ զբազում եսպան և զհոլով Սեաստիոսս գերի տարեալ ի գղեակն. վաճառեաց ընդ ոսկւոյ կայսերն Էմմանուելի և դանձն բաշխեաց իւրոց զօրուն»[50]:

Ինչպես Երուսաղեմի թագավորությունում, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորությունում՝ զինվորական ծառայությունը հիմնականում կատարվել է սինյորից ստացած ֆեոդի և ռոճիկի դիմաց: Ռոճիկ ստացող ձիավորները Երուսաղեմի թագավորությունում կոչվում էին՝ «Soudoyer»-ներ, այսինքն բառացի՝ ռոճիկ ստացողներ, որոնք ռոճիկ էին ստանում փողով և բնամթերքով՝ գյուղացիներից գանձված բահրայով: Պահպանվել են վկայություններ soudoyer-ների ստացած ռոճիկի և բահրայի չափի մասին: Այսպես Ջոն Մարգատ հեծելվոր վասալը, որը վասալական կախման մեջ էր գտնվում Արսուֆի սենյորայից, ստանում էր ռոճիկ դրամով՝ 200 բյուզանդ, և բահրա՝ որոշ քանակությամբ ցորեն, յուղ և այլ մթերքներ, որի դիմաց նա պարտավորվում էր սենյորին ներկայանալ 4 ձիով[51]:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» և Ներսես Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»-ում վկայություններ կան Կիլիկիայի հեծելվորների և զինվորականների ռոճիկ կամ թոշակ ստանալու մասին: Այսպես, Սմբատը, համեմատելով հոգևոր ֆեոդալների ստացած եկամուտը եկեղեցուց ձիավորների ստացած թոշակին, գրում է. «Վասնզի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառայութենէն՝ զեդ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն»[52]: Ներսես Շնորհալին «Թուղթ Ընդհանրականի» «Առ իշխանս որ ընդ աշխարհի» բաժնում դիմելով իշխաններին գրում է. «Նաև զին-

---

[48] «Բազմավեպ», 1913, էջ 288—299: Chronique d'Ernoul et de Bernard de Trésorier publié par M. L. De Mas Lattries, Paris, 1871.

[49] Смбат Спарапет, Судебник, стр. 11—12.

[50] «Սամվել քահանայի Անեցւոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 216—217:

[51] Rey, Les colonies Franques en Syrie, p. 24.

[52] Смбат Спарапет, Судебник, стр. 21.